



Funded by the European Union

EU4Environment

Green Economy in Eastern Partner Countries

Արտադրության բնապահպանական հետք (PEF)

ԵՄ Արևելյան գործընկեր երկրների (ԱԷԳ) ընտրված ոլորտներում



Բնապահպանական կատարողականի նկարագիր:

«Էկոլոգիապես մաքուր» դառնալու կամ «Էկոպիտակներ» ձեռք բերելու համար ապրանքներն ու ծառայությունները կարող են օգտագործել մի շարք կամավոր մեթոդներ՝ նպատակ ունենալով ապացուցել, որ վերջիններս էկոլոգիապես նախընտրելի են տվյալ արտադրանքի խմբում կամ ճյուղում: Միայն Եվրոպական Միությունում (ԵՄ) կան ավելի քան 230 էկոպիտակներ, որոնք այդ թվում անդրադառնում են այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են անտառահատումը, կենսաբազմազանությունը, թունավոր բաղադրությունները, շրջանաձև տնտեսությունը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու ածխածնի արտանետումները¹:

Ընկերությունները, որանք իրենց արտադրանքը փորձում են գովազդել որպես էկոլոգիապես մաքուր, կարող են մեծ դժվարություններ ունենալ շուկայական հնարավորությունների և շուկայի մարտահրավերների միջև ճիշտ հավասարակշռություն գտնելու գործում: «Էկոպիտակներ» լայն տեսականու առկայությունը, որտեղ յուրաքանչյուր «Էկոպիտակ» ունի իրեն յուրահատուկ մեթոդաբանական պահանջները, ընկերություններին կարող է կանգեցնել լրացուցիչ ծախսերի կամ արտադրական պրոցեսների ու շրջանաձևերի առաջին սպառողների համար շփոթության պատճառ դառնալ: Այս խնդիրներին լուծում տալու, ապրանքախմբերի շրջանակում համադրելիությունը բարձրացնելու և արտադրողներին ու սպառողներին հստակ ցուցումներ տրամադրելու համար Եվրոպական Հանձնաժողովը 2013 թվականին Կանաչ արտադրանքի միասնական շուկայի (SMGP) նախաձեռնության շրջանակներում, ներկայացրել է Արտադրության բնապահպանական հետքի (ԱԲՀ) մեթոդաբանությունը²:

ԱԲՀ մեթոդն ընկերություններին օգնում է չափել իրենց բնապահպանական ցուցանիշներն ու վստահորեն դիրքավորվել կայուն արտադրանքի շուկայում: ԵՄ հետ առնչվող այլ նախաձեռնություններից են նաև «Կանաչ գործարքը» և 2020 թվականի «Շրջանաձև տնտեսության գործողությունների ծրագիրը», որոնք ԱԲՀ-ի հետ միասին կարող են ստեղծել արտադրանքի քաղաքականության ամուր ու համահունչ հայեցակարգ, որը կայուն զարգացմանը համահունչ արտադրվող արտադրանքը, ծառայություններն ու բիզնես մոդելները բացառություններից կվերաժի նորմի:

Ի՞նչ է Արտադրության բնապահպանական հետքը (ԱԲՀ):

ԱԲՀ-ը որևէ ապրանքի կամ ծառայության ամբողջ կենսացիկլի ընթացքում վերջինիս բնապահպանական արդյունավետության բազմակողմանի չափումն է: ԱԲՀ վերաբերյալ տեղեկատվության տարախումբը նպատակ ունի նվազեցնել շրջակա միջավայրի վրա ապրանքների արտադրության ազդեցությունները՝ հաշվի առնելով դրանց մատակարարման շղթայի գործունեությունը (սկսած հումքի արդյունահանումից, մինչ արտադրության և օգտագործման միջոցով թափոնների վերջնական կառավարումը): Ամփոփելով կարելի է նշել, որ ԱԲՀ-ը ԵՄ կողմից առաջարկվող գործիք է, որը հիմնված է ապրանքի կամ ծառայության կենսացիկլի (LCA) ընթացքում վերջինիս

բնապահպանական ազդեցության քանակական գնահատման վրա³: Դա արվում է ռեսուրսների, նյութերի և էներգիայի հոսքերի բնապահպանական ցուցանիշների մոդելավորման և արտադրության թափոնների հոսքերն ավելի լավ բացահայտելու նպատակով արտադրանքի մատակարարման շղթայի ուսումնասիրման միջոցով⁴: ԱԲՀ մեթոդը կարևոր նմանություններ ունի կենսացիկլի գնահատման մեթոդի (LCA) հետ, սակայն դրանք նույնը չեն: Կենսացիկլի գնահատման հիմքում ընկած է ստանդարտացված մեթոդաբանություն, որը չափում է շրջակա միջավայրի ճնշումները, օգուտները, փոխզիջումներն ու բացահայտում է արտադրանքի կենսացիկլի այն ոլորտները, որտեղ կարող են բարելավումներ կատարվել: LCA-ն դիտարկում է արտադրանքի փուլերը (ինչպիսիք են արտադրությունը, տեղափոխումը, օգտագործումն ու ժամկետի ավարտը): Մի կողմից ԱԲՀ-ը LCA-ն իրագործելու տարբերակ է, սակայն ի տարբերություն վերջինիս պահանջում է լրացուցիչ ջանք՝ ավելի հետևողական, հուսալի ու վերաբարձրելի արդյունքներ ապահովելու համար: Սա պայմանավորված է նրանով, որ ԱԲՀ մեթոդաբանական ավելի քիչ ճկուն է, քան LCA-ն և որակյալ տվյալների ավելի խիստ պահանջներ ունի⁵:

Ի՞նչ նշանակություն ունի ԱԲՀ-ը իմ ընկերության համար:

ԱԲՀ-ը ձեռնարկություններին հնարավորություն է ընձեռում արդյունավետորեն բարելավել իրենց մատակարարման շղթայի կայունությունը: ԱԲՀ-ի ուսումնասիրությունն արժեքավոր պատկերացումներ կտրամադրի ապրանքի առավել մեծ ազդեցություն թողող բաղադրիչների, մշակման քայլերի կամ կենսացիկլի փուլերի վերաբերյալ արդյունքում դառնալով հիանալի մեկնարկային կետ ազդեցության նվազեցման համար (օրինակ՝ դիզայնը վերանայելով, ռեսուրսների կորուստները նվազեցնելով կամ արտադրության օժանդակ նյութերին նոր գործառնություն հաղորդելով): Բացի տվյալների շարքեր, ազդեցության չափման գործակիցներ և հաշվարկման մեթոդներ առաջարկելուց, ԱԲՀ-ը նաև ապրանքների խմբերի համար ընդհանուր կանոններ է առաջ քաշում, ինչը հնարավորություն է տալիս ընկերություններին գնահատել իրենց արտադրանքի վերաբերյալ առաջընթացը տվյալ ճյուղում կամ ապրանքախմբում: Իրենց հերթին էլ, ձեռնարկություններն ավելի լավ են կարողանում գնահատել ազգային ու եվրոպական մրցակիցների համեմատ իրենց բնապահպանական կատարողականը: Չափորոշումը նաև հզոր խթան է հանդիսանում հեղինակություն ձեռք բերելու և առօրյա կյանքում սպառողների կողմից գնահատվող կայուն ու էկոլոգիապես մաքուր ապրանքներ ու ծառայություններ ստեղծելու համար: Հետևաբար, բնապահպանական լավ ցուցանիշները դրսևորելը, հատկապես ԵՄ միասնական շուկայի նման դիմապիկ ու մրցակցային շուկայում, ինքնին հավելյալ արժեք է, որը ցանկացած ընկերության համար կարող է ապահովել ընդհանուր լավ հետևանքներ և առողջ ռազմավարություն: Սպառողների կողմից գնումների վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելը սովորական է դարձել Եվրոպայում և ամբողջ աշխարհում: Սպառողները միայն նմանատիպ ապրանքների ու ծառայությունների ցուցանիշների համեմատման միջոցով կարող են սովորել վստահել նոր ապրանքանիշներին ու բազմազանություն մտնել իրենց ծախսային սովորությունների մեջ:

1. Աղբյուր: <https://ec.europa.eu/environment/ecolabel/did-you-know.html>
2. Աղբյուր: [Understanding PEF and OEF methods](https://ec.europa.eu/environment/pef/understanding-pef-and-oef-methods)
3. Աղբյուր: <https://epca.jrc.ec.europa.eu/EnvironmentalFootprint.html>
4. Աղբյուր: <https://ec.europa.eu/environment/eussd/pdf/footprint/PEF%20methodology%20final%20draft.pdf>
5. Աղբյուր: https://www.meti.go.jp/committee/kenkyukai/sangi/lca/pdf/001_04_00e.pdf

Action implemented by:





Ինչպե՞ս է «ԵՄ հանուն շրջակա միջավայրի» ծրագիրը խթանում ԱԲՀ-ը

Ներկայումս Արևելյան գործընկերության (ԱԳ) տարածաշրջանում ԱԲՀ մեթոդաբանությունը խթանվում է որպես ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (ՄԱԿ ԱԶԿ) կողմից ղեկավարվող գործունեություն ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ հանուն շրջակա միջավայրի» ծրագրի միջոցով: Այստեղ, ի թիվս մնացածի, ծրագրված աշխատանքը ներառում է առկա պրակտիկաների և ԱԲՀ-ի ներդրման խոչընդոտների քարտեզագրում, դրանց համեմատում պիտակավորման առկա սխեմաների հետ, SMGP նախաձեռնության հնարավորությունների ու առավելությունների վերաբերյալ իրազեկության ու ըմբռնման մակարդակի բարձրացում ԱԲՀ-ի միջոցով, ինչպես նաև ԱԳ-ի ընտրված ոլորտներում ԱԲՀ-ի խթանում ու ղեկավարման առաջնորդում:

Ծրագիրը տեղական շահագրգիռ կողմերին ավելի իրազեկված կդարձնի ԱԲՀ-ի կիրառման հնարավոր օգուտների ու ազդեցության մասին ԱԳ տարածաշրջանում տեղական կարողությունների ստեղծման, ազգային արտադրողներին ԱԲՀ-ի հետ կապված հնարավոր քաղաքականություններին ավելի պատրաստված լինելու նպատակով օգնության տրամադրման, տեղական փորձագետների համար ուսուցման հնարավորությունների ընձեռման միջոցով (օգտագործելով փորձնական ուսումնասիրություններ և որոշակի հստակ առաջարկներ անելով արտադրական պրոցեսն ավելի կայուն արտադրանքների ուղությամբ տանելու նպատակով) Բացի այդ, ԵՄ ու ՄԱԿ ԱԶԿ կներառեն տեղական իրազեկման և կարողությունների զարգացման գործողություններ, որոնք կնպաստեն «կանաչ» ջանքերի ու քաղաքականությունների ավելի լայն աջակցությանը:

ՄԱԿ ԱԶԿ-ի կողմից առաջնորդվող նմանատիպ ծրագրերի հաջողության պատմություններ:

ՄԱԿ ԱԶԿ-ն՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող Շրջանաձև սնունդային խթանող **SwitchMed** ծրագրի միջոցով ԱԲՀ-ի մասին իրազեկության բարձրացման մեծ փորձ ունի: Այստեղ ՄԱԿ ԱԶԿ-ն ներդրեց ԱԲՀ-ը՝ Հարավային Միջերկրական տարածաշրջանում ավելի կանաչ արդյունաբերության զարգացումը և կայուն արտադրությունն ու սպառումը ամրապնդելու համար:

Նպատակներից մեկն էր ԱԲՀ-ի ներկայացումը Եգիպտոսում, Լիբանանում, Մարոկկոյում և Թունիսում՝ եվրոպական շուկայում այդ երկրների ընկերությունների դիրքերը բարելավելու համար: Հաջողության պատմությունները ներառում են երկու հետազոտություններ գինու արտադրության, ինչպես նաև ձիթապտղի յուղի, մակարոնեղենի, կաթնամթերքի, կաշվի ու նոթագրման համար նախատեսված թղթի արտադրողների վերաբերյալ:

«ԵՄ հանուն շրջակա միջավայրի» ծրագրի մասին:

ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ հանուն շրջակա միջավայր» գործողությունը նպատակ ունի պահպանել և ավելի լավ օգտագործել բնապահպանական կապիտալը, բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը և խթանել ավելի կանաչ սնունդական աճն Արևելյան Գործընկերության երկրներում: Ծրագրի նախաձեռնություններն օգնում են իրականացնել քաղաքականության ու օրենսդրական փոփոխություններ, պլանավորումն ու ներդրումները դարձնել ավելի կանաչ և նոր բիզնես մոդելներ ներդնելով և կանաչ աշխատատեղեր ստեղծելով խթանել նորարարական տեխնոլոգիաների յուրացումը: Դրա շրջանակներում Շրջանաձև Տնտեսություն և Աճի Նոր Հնարավորությունների բաղադրիչի Արդյունք 2-ի ներքո ՄԱԿ ԱԶԿ-ն պատասխանատու է հետևյալ վերջնարդյունքների համար՝

- 1.Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) շրջանակում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության (ՌԱՄԱ) ընդլայնում:
- Արդյունաբերության մեջ ռեսուրսների արդյունավետության մասին կարողությունների զարգացում և իրազեկում
- Արտադրական ՓՄՁ-ների համար ռեսուրսների ՌԱՄԱ գնահատումներ
- Ձեռնարկությունների համար ՌԱՄԱ ակումբների ստեղծում
- Գոյություն ունեցող արդյունաբերական տեղամասերում էկոարդյունաբերական պարկերի շրջանակի կիրառման իրագործելիության գնահատում և
- Ընտրված տարածաշրջաններում արդյունաբերական թափոնների քարտեզների մշակում:
- 2.Նախաձեռնության ու ԱԲՀ մեթոդաբանության հայեցակարգերի ու գործիքների ներդրում ու խթանում
- ԱԲՀ-ի համար խոչընդոտների ու հնարավորությունների քարտեզագրման
- SMGP իրազեկման խթանման
- ԱԲՀ -ի կիրառման կարողությունների զարգացման և
- ընտրված ՓՄՁ-ներում ԱԲՀ -ի փորձնական իրականացման միջոցով:

Արևելյան Գործընկերության(ԱԳ) տարածաշրջանի համապատասխան հաստատությունները, կամակերպություններն ու արտադրական ձեռնարկությունները հրավիրվում են ԱԲՀ -ի մասին ավելի իմանալու և դրա խթանմանը նպաստելու համար: Ծրագրի, SMGP նախաձեռնության կամ ԱԲՀ -ի մասին լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև Արևելյան Գործընկերության երկրներից յուրաքանչյուրում դրանք օգտագործելու հնարավորությունների մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար խնդրում ենք կապվել ՄԱԿ ԱԶԿ-ի «ԵՄ հանուն շրջակա միջավայր» ծրագրի ղեկավարի հետ:

Կոնտակտային տվյալներ:

United Nations Industrial Development Organization
«ԵՄ հանուն շրջակա միջավայրի»
Ծրագրի ղեկավար տիկին Տատյանա Չերնյավսկայա
Հեռախոս: +43 1 26 0 26 5520
հասցե: t.chernyavskaya@unido.org
Կայք: www.unido.org

